Արձանագրություն N 4

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

10.09.2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Կուլախսզյանը, անդամներ՝ Հայկ Թադևոսյանը, Արաբու Մարքարյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ

Օրակարգ.

1. «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:
3. Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու և ՀՀ ֆինանսների նախարարություն տեղեկություն ուղարկելու վերաբերյալ որոշում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

1. «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատում

«Լանս» ՍՊԸ-ն ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատման արդյունքները համարել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ որոշում:**

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը 04.09.2018թ. հարցում ներկայացրեց (կցվում է) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության (կցվում է)՝

- «Լանս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 19000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որն ավելին է «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներակայացված գնային առաջարկի 1%-ից: Հանձնաժողովը որոշեց մերժել «Լանս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

3. **Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու և ՀՀ ֆինանսների նախարարություն տեղեկություն ուղարկելու վերաբերյալ որոշում**

Հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/07» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն և ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովը նախագահող՝ _____ Ա. Կուլախսզյան

անդամներ՝ _____ Ա. Մարքարյան

_____ Հ. Թադևոսյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան